

Մեր Ընտանիքը

Իրողություն էր, որ տատիկս, իր բազմաչարչար կյանքի ընթացքում, երբեք չընկրկելով, պահպանել էր սովորույթներ, ավանդույթներ, անկոտրում հպարտություն, որոնք չէին համապատասխանում իր գավակների կենցաղին, իր նյութական կացությանը: Եվ այս ամենը տառապանքի աղբյուր էր դարձել նրա համար:

Տասնչորս տարեկանում նրան հապշտապ ամուսնացրել էին Շիրինի որդի Հակոբի հետ, ով գեղեցկադեմ երիտասարդ կառապան էր Սկյուտարից, ընտրվել էր մի միջնորդ կնոջ կողմից:

Ահա թե՛ ինչպես էր դա պատահել:

Այն ժամանակ *ենիչերները* ահ ու սարսափի մեջ էին պահում մայրաքաղաքի ազգաբնակչությանը: Նրանք հատակապես սանձարձակ էին Ստամբուլի և Ոսկեղջյուրի հունական թաղամասերում: Տատիկիս ընտանիքը, արդեն իսկ կորցրած լինելով իր ազդեցությունը, նաև հավատը առ այն, որ կառավարությունը ի վիճակի է պաշտպանել իրենց, իրենց աղջկան՝ Լուսիկին, պահել էին տան չորս պատերի մեջ մինչև տասնչորս տարին լրանալը, վախենալով, որ նա կարող է գրավել *ենիչերների* ուշադրությունը: Սակայն համաձայն ժամանակի սովորույթների ակնկալվում էր, որ հասունացած աղջիկը առաջին անգամ պետք է տնից դուրս գար եկեղեցի գնալու և հաղորդություն ընդունելու նպատակով: Տատիկս պատմում էր, որ այն ժամանակներում կանայք առհասարակ տնից դուրս չէին գալիս, իսկ տղամարդիկ ամեն առավոտ աշխատանքի գնալիս կանգնում էին դռան շեմին, խաչակնքվում էին և տնեցիներին հրաժեշտ տալիս, քանզի վստահ չէին, որ երեկոյան կվերադառնան: Քանի՛ քանի՛ անգամներ *ենիչերները* իրենց *յաթաղանի* սրությունը փորձելու համար գլխատել էին քրիստոնիսների Ստամբուլի փողոցներում: Իրենց հնազադությունը ընդգծելու համար հույն և հայ տղամարդիկ բեղերը սափրում էին, լայնաբերան

Ֆեստերը (գլխարկները) իջեցնում էին ականջների վրա, փողոցներում քայլում էին երկչոտ, գլխիկոք, որպեսզի աչքի չընկնեն որևէ *ենիչերի* հանդիպելիս: Անհարգալից էր համարվում գլուխը բարձր պահելը, մարդկանց ուղիղ նայելը, և դա կարող էր դառնալ տարատեսակ կամայականությունների առիթ: Տատիկս հիշում էր ընտանիքների, որոնց տղամարդիկ անհետ կորել էին, պատմում էր ունևոր ընտանիքների մասին, որոնց զավակները օրվա հացի կարոտ էին մնացել: Նույնիսկ պետական պաշտոնյաները և սուլթանները սարսափում էին *ենիչերների* հանդիպելիս, որոնց իշխանությունը սկսվում էր իրենց տներից ու տարածվում իրենց թաղերի և մայրաքաղաքի վրա ամբողջությամբ:

Ամեն անգամ երբ տատիկս վերհիշում էր իր մանկության դաժան օրերը, Երանիկ մորաքույրը նրան ընդհատում էր.

- Է՛հ Դուդու, քո հայրը և մայրն էլ խելք չունեի՞ն, ինչու՞ էին այդ դաժան ժամանակներում քեզ եկեղեցի ուղարկում:

Տատիկս բացատրում էր, որ այդ ժամանակներում պատրիարքարանը հզոր էր, մեծ ազդեցություն ուներ: Պատրարքը *ենիչերների* պարագլխի հետ լավ կապեր ուներ և ոչ միայն ուշադրությամբ հսկում էր, որ իր հոտը կրոնական պարտականությունները կատարի, այլև խստորեն պատժում էր անհնազանդներին և թերացողներին:

- Է՛լ մի ասա Դուդու, - ընդհատում էր Երանիկ մորաքույրը, - երկու կրակի մեջ էիք մնացել:

Տատիկս ուշադրություն չէր դարձնում Երանիկ մորաքրոջ միտումնավոր ակնարկներին և շարունակում էր պատմել, թե ինչ միջոցներով էր պատրիարքարանը իր իշխանությունը գործադրում:

Այն ժամանակ եկեղեցիները պղնձե զանգակներ չունեին: Այգաբացին եկեղեցու լուսարարը գավազանով հարվածում էր տախտակին, իսկ ժամկոչը անցնում էր

թաղերով և, երգելով, հավատացյալներին հրավիրում էր եկեղեցի՝ առավոտյան աղոթքի: Տղամարդիկ ստիպված էին գնալ եկեղեցի, իսկ կանայք տանն էին աղոթում: Պահքի օրերին պատրիարքարանի հսկիչները շրջում էին թաղերում, որսի շների պես հոտ էին քաշում և, եթե որևէ տնից մսի հոտ էին առնում, տանտիրոջը ձերբակալում էին, երբեմն տեղնուտեղը ծեծում էին, պատժում, մսեղենը առգրավում և տուգանում: Երբեմն էլ այդ տանտերերին տանում էին եկեղեցու բանտը, որտեղ նրանց ծեծում և բանտարկում էին: Եթե որևէ մեկը դիմադրում կամ ընբոստանում էր, տանում էին պատրիարքարանի գնդանը և պահում ամիսներ շարունակ, մինչև «հանցավորը» չէր ապաշխարհում: Երբեմն էլ մարդուն ուղարկում էին հոգեբուժարան որպես խելագար և, այլևս նրա մասին լսող չէր լինում:

Այդ ժամանակ Սուրբ Հովհաննես եկեղեցու նկուղը ծառայում էր որպես հոգեբուժարան Նարլիկապոլում: Խենթերին կապում էին շղթայով, դաստակներին և ոտքերին երկաթյա կապանքներ էին հագցնում՝ թողնելով նրանց կեղտի և կղանքի մեջ: Հոգեբուժարանի պահակները եկեղեցու «սուրբ խորհուրդները և կարգերը» հայիոյողներին լռեցնելու համար նրանց անխնա ծեծում էին, երբեմն էլ՝ մահվան հասցնում: Տատիկս պատմում էր, որ այդ ընթացքում ծեծվողները էլ ավելի բարձր էին հայիոյում:

Մի անգամ էլ տատիկս պատմեց, թե ինչ հանգամանքներում էր կազազ Արթին Ամիրան որոշել Ետիկուլեյում իր միջոցներով կառուցել Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցը:

Որևէ մեծ տոնի առիթով պատրիարքը հանդիսավոր պատարագ էր մատուցում Նարլիկապոլի Սուրբ Հովհաննես եկեղեցում՝ շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, և այն ժամանակների ամենաշնորհալի դպիրներով, որոնք իրենց թաղերի երգիչներն ու փառքն էին համարվում: Տատիկս հիշում էր այդ նշանավոր դպիրների անունները, հատկապես դպրապետի անունը, և ասում էր, որ նրա նմանը

աշխարհում չկար: Այդ հանդիսավոր պատարագին ներկա էին լինում նաև մեծահամբավ ամիրաները և նրանց շքախմբերը, որոնք կազմված էին այն ժամանակների հարուստ վաճառականներից և թաղերի երևելիներից:

Պատարագի մեկնարկին նկուղում բանտարկված խենթերը սկսում էին այնպես միահամուռ և բարձրաձայն հայհոյել, որ բղավոցների խուլ արձագանքները լսելի էր դառնում և խանգարում պատարագ մատուցողին ու հավատացյալ ժողովրդին: Պատարագ մատուցողի՝ գայրացած ազդաշնանին հետևելով, հաղթանդամ ժամապահները, որոնցից յուրաքանչյուրի բեղերից մեկ մարդ կարող էր կախվել, ապարդյուն գնում էին նկուղ և խենթերի հսկիչներին պատվիրում էին «սատկացնել այդ շներին»: Արգելափակվածները անխնա ծեծի տակ շարունակում էին անեծքներ և հայհոյանքներ տեղալ գոռում-գոչյունով և օրհասական ահեղ ցասումով:

Վերջապես այդ օրը վերնատնից սամաթիացի արհեստագործ մի կին, որին անպարկեշտ Պայծառ էին կոչում, և որի մասին ասում էին, որ դիվահար է, ազդվելով նկուղի խենթերի վիճակից, նախ սկսել էր բարձրաձայն լալ, ապա հայհոյել պատարագը, պատարագ մատուցողին ու ի նշան բողոքի՝ եկեղեցու նստարանների բարձերը նետել հավատացյալների վրա:

Պատարագից հետո, երբ պատրիարքը, արքեպիսկոպոսը, ամիրաները և իրենց հավատարիմ երևելիները հավաքվել էին ժողովների մեծ սրահում և խոժոռ դեմքերով քննարկում էին օրվա պատահածը, մեկը մոտեցավ կազազ Ամիրային և իր ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ անպատշաճ էր խենթերին պահել պատրիարքանիստ եկեղեցում:

- Վատ ժամանակները են իմ ամիրա՛, -ասում էր նա- գլուխս խոնարհելով և Ձեր ոտքերը համբուրելով եմ ասում, որ, եթե թաղերում անհնազանդների և խենթերի քանակը ավելանա, մեր զնդանում հնարավոր չի լինի նրանց տեղավորել, և միայն դու կարող ես լուծում գտնել:

- Ո՛վ Սուրբ Փրկի՛չ, - գոչում էին եկեղեցականները և աշխարհականները միաբերան, - վա՛տ ժամանակներ են, փրկե՛ք մեզ մեր բոքոտ ոչխարհներից:

Այդ ժամանակ կազազ Ամիրան որոշեց մի հոգեբուժարան կառուցել իր միջոցներով քաղաքի պարիսպներից դուրս՝ Ետիկուլե կոչված ամայի վայրում, ինչպես նաև մի մատուռ՝ Սուրբ Փրկիչ անունով:

Երանիկ մորաքույրը շատ էր ազդվում այս պատմություններից և, փորձելով կիսել այդ ժամանակի մարդկանց մտահոգությունները, բարկացած ասում էր.

- Դուդու, ի՞նչ մուլորյալ մարդիկ են եղել: Պետք է կառավարությանը դիմեի՛ն, իսլամ ընդունեի՛ն, փորձեի՛ն մի բան անել ազատվելու համար:

Տատիկս գլուխը շարժում էր սրտնեղած և մորաքրոջս ամբարիշտ մտքերին հակազդելու համար խաչակնքվում և ասում էր.

- Որ կողմն էլ շրջվեին, չէին կարող ազատվել:

Սակայն պատահում էր, որ կաշառքով կամ այլ միջոցներով բանտարկյալը կարողանում էր մուսուլման պաշտպան գտնել, և պատրիարքարանը անգոր էր լինում իր պատժիչ միջոցները կիրառել: Այդ ժամանակ, տատիկիս ասելով, պատրիարքարանը սոսկալի միջոցի էր դիմում՝ ազատված բանկտարկյալին արտաքսում էր համայնքից: Բոլոր թաղերի եկեղեցիների բեմերից քարոզիչները նզովում էին այդ մարդկանց, և այդ անձը ու նրա ընտանիքը դառնում էին բոքոտներ համայնքում: Շատ հպարտ անձինք մի քանի ամիս խրոխտանալուց հետո, չդիմանալով այդ վիճակին, խոնարհվում էին, ծնկաչոք ներողություն խնդրում, իրենց ողջ ունեցվածքը դնում էին պատրիարքի ոտքերի տակ, որպեսզի բանադրանքը վերանա և իրենք կրկին «կենդանի մարդ դառնան»: Ոմանք էլ, պատմում էր տատիկս, ուրանում էին իրենց հավատքը և իսլամ ընդունում:

Այսպիսի ժամանակներ էին, երբ դուրսն տասնչորս տարեկան հասակում առաջին անգամ տարեց ազգականուհիների ուղեկցությամբ տնից դուրս եկավ եկեղեցի գնալու համար: Այդ ժամանակ, Կոստանդնուպոլսի քրիստոնյա կանայք չէին կրում եվրոպական հագուստ: Թուրք կանանց պես նրանք հագնում էին *ֆերաջե* կամ *էնթարի*, կրում էին *յաշմագ* կամ պարզ քող, ինչը հատուկ էր իրենց պատկանած դասակարգին:

Եկեղեցուց վերադառնալու ճանապարհին Լուսիկը և իր բարեկամուհիները հանդիպում են *էնիչերների*: *Ենիչերները* միանգամից հարձակվում են դեռատի աղջկա վրա, պատռում են *ֆերաջեն*¹ պատճառաբանելով, որ այն պատված էր կանաչ գույնի զարդերով: Կանաչ գույնը մուսուլմանների համար սուրբ գույն էր և *«կյավուրները»* իրավունք չունեին այն կրելու: Սակայն ավելի ծանրակշիռ էր այն հանգամանքը, որ երբ Լուսիկի *յաշմագը* հանում են դեմքից, տարեց կանայք բղավում են, ժամկոչը և լուսարարը վրա են հասնում և, օգտվելով *էնիչերների* միջև ծագած վեճից, Լուսիկին կարողանում են փախցնել և տուն տանել:

Բայց աղջկա հեղինակությանը արդեն վնաս էր հասցված: Ով կամուսնանաք մի աղջկա հետ, ում դեմքը տեսել էին այսպես կոչված «հեթանոսները»: Բացի այդ, այլևս վտանգավոր էր այդ «նշմարված» աղջկան պահել տանը: *Ենիչերները* կարող էին փախցնել նրան ցանկացած պահի: Իրենց տունը և ընտանիքը այդ հնարավոր անպատվությունից փրկելու համար Լուսիկի ծնողները դիմում են վարձկան միջնորդ մի կնոջ և պատվիրում են որևէ փեսացու գտնել Լուսիկի համար:

Միջնորդ կինը եկել էր Սկյուտար փնտրելու մի երիտասարդի, որի ձեռքից կնոջը խլել դյուրին չէր լինի: Սկյուտարում *էնիչերները* ավելի փոքր ազդեցություն ունեին, և տեղի խաբատայինները ¹ որոշ չափով զսպում էին *էնիչերների* սանձարձակությունները՝ երբեմն դաշինք կնքելով, երբեմն կուրծք կրծքի, դանակ

¹ Տեղական, իսլամ չղավանող հերոսներ:

դանակի կովելով, իմանալով, որ իրենց ետևում է Անատոլիան և շրջակա մոտիկ և հեռավոր անտառները, որտեղ կարող էին ապաստան գտնել հարկ եղած ժամանակ:

Պապիկս՝ Հակոբը, սերում էր քարանավանի առաջնորդների ընտանիքից, որոնք հայտնի էին իրենց խիզախությամբ և ճարպկությամբ: Այդ ժամանակներում Սկյուտարը տարանցիկ քաղաք էր, որը ճանաչված էր իր քարավանատներով և արագավազ ձիերի կայաններով: Հակոբի հայրը՝ Շիրինը, և հորեղբայրը՝ Ֆերհաթը, քարավանները առաջնորդում էին միջև Բաղդատ, Բասրա, Պարսկաստան, և ինչպես Երանիկ մորաքույրն էր ասում, մինչև Հնդկաստան և Չինաստան: Միևնույն ժամանակ Շիրինը աշուղ էր, իսկ Ֆերհաթը՝ *մեթթահ*²:

Դուդուն դժբախտ էր իր ամուսնությամբ: Նա ոչ միայն հանկարծակի էր եկել իր առօրյա կյանքից հիմնովին տարբերվող այլ միջավայրում հայտնվելով, այլև շուտով հասկացել էր որ Հակոբը տարօրինակ և ոչ ավանդապաշտ մարդ էր: Նա իրեն համարում էր աշուղ և միևնույն ժամանակ կառապան, երբ այլևս քարավաններ չկային: Նա գինետների հերոս էր, կովարար, արկածախնդիր, երբեմն, անսալով անդիմադրելի մղումներին, թողնում էր կառքը, տունը, կնոջը, երեխային և, ձի հեծնելով, բռնում էր Բոստայի ճանապարհը: Իր հետքը կորում էր Չամլիջայի ետևում տարածվող հովիտներում: Ու՞ր էր գնում, ի՞նչ էր անում, ոչ ոք ոչինչ չգիտեր: Հավանաբար գնում էր Անատոլիայի հեռու և մոտիկ քաղաքները և որպես աշուղ մասնակցում էր ինչ-որ տոնակատարությունների: Թերևս պարզապես ինչ-որ նոր տեղ հասնելուց հետո, նա վայր էր գտնում, որտեղ կարող էր ձին ի պահ տալ, ապա որպես դերվիշ աննպատակ թափառում էր անձանոթ ճամփաներով: Ամեն դեպքում, իմ պատանեկան տարիներին Սկյուտարի ձերերը ասում էին, որ Հակոբը աննման աշուղ էր, հատկապես երբ հանպատրաստից երգում կամ արտասանում էր: Թուրքերը այնքան էին գնահատում նրա աշուղական արվեստը, որը ցանկանում էին դառնալ նրա աշակերտը: Ասում էին, որ երբեմն նա գրի էր առնում իր երգածը՝

² Դյուցագներգական պատմություններ պատմող:

հայատառ, թուրքերեն: Բայց այդ գրություններից որ մի բան չեմ կարողացել գտնել: Միայն լսել եմ պապիկիս երեք աշուղական բանաստեղծությունները մեկ ուրիշ հայազգի աշուղի այրուց, որոնք ինձ հիասքնաս էին թվում: Այդ ժամանակ ես հազիվ տասներկու տարեկան էի:

Մինչ այժմ չգիտեմ, թե ինչ գործիք էր նվագում Հակոբը: Պապիկիս մահից հետո տատիկս ոտքերով կոտրել էր գործիքը, այրել էր բոլոր թղթերը և հրաժարվում էր խոսել իր ամուսնու աշուղական կյանքի մասին, ինչը նա իր տառապանքների հիմնական պատճառն էր համարում: Հակոբը իր խորհրդավոր ճամփորդություններից վերադառնում էր հոգնած, սպառված: Կինը նրան խնամում էր առանց հարցեր տալու: Կազդուրվելով և վերականգնվելով՝ նորից նետվում էր ձիու վրա և ճանապարհ էր ընկնում: Այդ անհետացումների ընթացքում կինը անտեր էր մնում և երբեմն էլ ծայրահեղ չքավորության մատնվում: Միշտ հղի լինելով՝ նա անիծում էր իր ամուսնուն, իր բախտը և սփոփանք էր գտնում եկեղեցում: Այս պայմաններում նա տասներեք զավակ էր ունեցել, որոնցից ինն էին կենդանի մնացել: Մայրս նախավերջին զավակն էր:

Ես ունեի հինգ մորեղբայր և երեք մորաքույր: Իմ ծնվելու ժամանակ միայն Նահապետ մորեղբայրս էր ամուսնացած և իր ընտանիքով ապրում էր Յենիմահալլեում: Նահապետ և Խաչիկ մորեղբայրներս երկաթագործներ էին և ապրում էին Պերայում: Մյուս մորեղբայրներս *յազմաջի* բանվորներ էին, իսկ մորաքույրներս՝ բանվորուհիներ, և ապրում էին մեր տանը:

Անի քաղաքը նստած լալիս էր

Ես հուսահատորեն բողոքում էի, երբ Յուղաբեր մորաքույրը, երբեք չդադարող ջղային շարժումներով, գլուխը աջ ու ձախ շարժելով, ինձ համոզում էր գնալ ննջասենյակ և պառկել:

Տատիկս, որ նույն սենյակում էր, միջամտում էր.

- Դեռ վաղ է, չի մթնել, երեխային հանգիստ թո՛ղ:

Կրկին շրջվում եմ դեպի պատուհանը: Մթնշաղը աղոտ է դարձնում տեսարանը: Ձյունը սկսում է ավելի խիտ ու արագ տեղալ: Մի մարդ փորձում էր բլուրը բարձրանալ, մեկ ձեռքով դույլամնան վառարանն էր բռնել, մյուս թևի տակ իր գործիքներն էր տանում: Նա փոքրամարմին, կոր մեջքով և ծուռ ոտքերով մարդ էր: Նա հրեա շրջիկ թիթեղագործ էր, ով անցնում էր փողոցներով, կանգնում էր տների մոտ՝ անագով պղնձե տարաները նորոգելու կամ նավթի թիթեղյա տուփերով զանազան պնակներ պատրաստելու նպատակով: Նա աղքատ արհեստավոր էր և աշխատում էր աղքատ հաճախորդների համար:

Աչքերով հետևում էի այս մարդուն, նա դժվարությամբ էր բլուրը բարձրանում: Քամին առագաստի պես բացում էր նրա վերարկուի փեշերը, և նա չէր կարողանում դրանք հավաքել, որովհետև ձեռքերը ազատ չէին: Քամին ուժգին սուլում էր, ձյունը, գետնից վեր բարձրացնելով, սառնաշունչ մշուշով էր պատում ծուռ ոտքերով մարդուն, ում թիթեղյա վառարանի ծակոտյա մասերից կայծեր էին ելնում: Հանկարծ փողոցի տղաները թողնում են իրենց խաղը, հարձակվում են թիթեղագործի վրա և մեկ ակնթարթում տեսնում եմ, թե ինչպես է մարդը տապալվում գետնին, գործիքները նետվում են այսուայն կողմ, իսկ վառարանի կրակները ցրվում են ձյան մեջ: Մարդը նստել էր ավերակների մեջ, ձեռքերը գլխին և ծնկներին զարկելով, ողբում էր, իսկ տղաները վայրենաբար ծիծաղում էին, մինչև որ աղմկելով, հեռանում և անհետանում էին հարակից փողոցներում:

Այս տեսարանից ստամոքս սկսել էր սուր ծակել, և ես ամբողջ ուժով բղավում էի:

Մայրս, մորաքույրներս և տատիկս մոտեցան և բոլորոցին շուրջս, սկսեցին հարցեր տալ: Իմ մանկական հոգին իր ամբողջ ուժով ըմբոստանում էր այդ բարբարոսության դեմ, որի վկան էի: Այդ մարդը դեռ շարունակում էր ողբալ իր ցրված

գործիքների և ընկած վառարանի մոտ: Այդ տեսարանը դարձել էր Անի քաղաքի պատկերը, որը նստած լավիս էր:

Իմ ուժեղ զգացողությունների ազդեցության տակ արցունքները ժայթքում էին աչքերիցս, և ես վերջապես ձեռքով ցույց եմ տալիս ինձ հուզող տեսարանը:

- Յավրու՛մ, ինչու՞ ես այդքան մտահոգվում: Նա հրեա՛ է, հրեա՛, - ասում էր տատիկս:

Չհասկանալով այդ բառերի իմաստը, տարակուսած հայածքով նայում եմ մեծերին՝ բացատրություն խնդրելով նրանցից:

- Նրանք Քրիստոսին չարչարեցին և նրան խաչեցին, դրանով իրենց մեղքն են քավում,- բացատրում էր տատիկս:

Ո՛չ, ո՛չ, իմ սիրտը չի ամոքվում այդ խոսքերից, և առաջին անգամ անձանոթ հրեա թիթեղագործը իմ մեջ արթնացնում է կարեկցանքի՝ տանջալից և անագորույն զգացումը:

Մի քանի տարի անց, երբ տասը տարեկան էի, մի օր, վերհիշեցի այս դեպքը:

- Արդյո՞ք ճիշտ է, որ հրեաները վատ մարդիկ են - հարցրեցի ես հայրիկիս, ում կարծիքը շատ հեղինակավոր էր ինձ համար:

Իմ սիրելի հայրիկը իր պայծառ աչքերը ուղղեց դեպի ինձ և ասաց խաղաղությամբ.

- Աղջիկս, չկա վատ ժողովուրդ, կան լավ մարդիկ և կան վատ մարդիկ:

- Իսկ թուրքերը՞

- Թուրքերը նույնպես:

Եթե տղա լինեի

Ձեռնահարկի մի սենյակում պահում էինք Տիգրան մորեղբորս թղթերը և իրերը: Նա երբեմն բարձրանում էր այդ սենյակ և ժամեր էր անցկացնում այնտեղ: Մի անգամ, երբ Տիգրան մորեղբայրս իր թղթերն էր կարգավորում, ես ևս այնտեղ էի, նա առանձնացրեց մի մեծածավալ ոլորապտույտ թուղթ, ինչը գրավեց իմ ուշադրությունը: Մորեղբայրս ոլորած թուղթը բացեց և ինձ մի զարմանալի պատկեր ցույց տվեց:

Մորեղբայրս բացատրում էր, որ նկարում պատկերված *յաթադաններով* մարդիկ *ենիչերներ* էին, իսկ ծնկաչոք աղերսողները՝ բուլխարներ: Նա նաև մեկնաբանում էր, որ այդ ժամանակ Սուլթանը բուլխարների կոտորածն էր կազմակերպել, որովհետև նրանք ապստամբել էին սուլթանական բռնապետության դեմ:

- Սուլթանները բռնակալներ են իրենց գործում, - ասում էր նա:
- Ի՞նչու Սուլթան Ազիզը, - հարցրեցի ես:

Շատ հաճախ գովեստներ էի լսել սուլթան Ազիզի մասին, որին ոմանք ազնիվ սուլթան էին կոչում: Հիշում եմ, որ շատերը սգում էին նրա եղերական մահը: Տատիկս պատմում էր, որ սուլթան Ազիզի օրոք կար առատություն և շքեղություն:

Նա գնում էր Ալեմ Դադի և բռերով ոսկի էր ծախսում:

Մի անգամ նա այրել էր իր պալատներից մեկը, որպեսզի լուսավորի իր ճանապարհը: Նահապետ մորեղբայրը հազվադեպ էր մեզ այցելության գալիս: Նա սովորաբար դժգոհում էր իր կնոջից և իր դժբախտությունը մոռանալու համար վերհիշում էր անցյալը ու պատմում էր սուլթան Ազիզի մասին: Նա ցուփ ու շվայտ փաղիշահ էր, բայց ժողովուրդը օգտվում էր նրա շվայտանքից: Սուլթան Ազիզը ապարանքներ և պալատներ էր կառուցել, որոնք ձգվում էին Թոփհանեփողուից մինչև Չամլիջա, որպեսզի ցանկության դեպքում կարողանար իր ճանապարհին՝ որևէ

տեղ, մի պահ կանգ առնել շերբեթ խմելու համար: Այդ ապարանքները այժմ կիսախարխուլ, անբնակ և կոտրված ապակիներով շինություններ էին, բայց ժամանակին եղել էին սուլթանական քմահաճ խրախճանքի շքեղ ապաստաններ: Բաղլարբաշի լայն պողոտան կառուցվել էր մեկ շաբաթում, որովհետև սուլթանը իր շքախմբով պատրաստվում էր, Հայդարփաշան անցնելով, այդ ճանապարհով ուղևորվել դեպի քաղաքի ասիական հատվածը:

- Եվ ո՞վ էր օգտվում այս ամենից, - հարցնում էր Նահապետ մորեղբայրը հետաքրքրաշարժ հայացքով: Սուլթանի շնորհիվ էր, որ մարդիկ կարողանում էին փող վաստակել: Նրա զվարճանքը մեր օգուտն էր:

Պատմում էին, որ սուլթան Ազիզի մահը ցավ էր պատճառել ժողովրդին: Բազմաթիվ գովերգեր էին գրվել, որոնք գաղտնագողի երգում էին մինչև իմ մանկության օրերը: Երբեմն, Յուղաբեր մորաքույրը երգում էր այդ գովերգերից մեկը՝ գլուխը անդադար շարժելով: Այն սուլթան Ազիզի սիրած սուլթանուհու ողբն էր:

Ինձ գահից իջեցրին

Չորս զույգ թիակներով արագընթաց

Տարան Թոփկապուի պալատ

Է՛հ սուլթան, սիրելի՛ սուլթան

Ժողովրդի աչքերից արյուն է հոսում:

Վերհիշելով այս պատմությունները, ես համոզված էի, Տիգրան մորեղբայրը ափսոսանքով պետք է պատմեր այն սուլթանի մասին, ում իր լոգարանի մեջ գտել էին արնաքամ վիճակում, բազկերակները սուր մկրատով կտրած: Ասում էին, որ նա ինքնասպանություն էր գործել:

Բայց Տիգրան մորեղբայրը, իմ հարցմանը ի պատասխան, հոնքերը վեր կլիտեց և ասաց զայրույթով.

- Սուլթան Ազիզը ամենաստո՛ր բռնակալն էր:

Այս խոսքերը մտահոգեցին ինձ: Ճիշտն ասած, նկարի մեջ արտահայտված սարսափելի տեսարանները խորը ազդեցություն չէին գործել ինձ վրա, որովհետև չէի կարողացել ընկալել դրանց ծանրությունը: Այդ ժամանակ դեռևս չկային հայկական կոտորածներ կամ գոնե ես այդպիսի բանի մասին չէի լսել, բուլխարների հետ պատահածը ինձ հեռավոր, անիրական, և մի տեսակ վատ երազ էր թվում: Բայց այս ամենից հասկացա, որ սուլթանները ամենագոր իշխանություն ունեին: Նրանք անարդար արարքներ էին կատարում, դա էր նրանց գործը այս աշխարհում: Ես զգում էի, որ Տիգրան մորեղբայրը դեմ էր ամենագոր իշխանություն ունեցողներին, և ուրախ կլիներ, եթե նրանք պատժվեին:

- Արդյո՞ք դա նշանակում է, որ սուլթան Ազիզին սպանողները լավ մարդիկ էին, - ասացի ես՝ փորձելով որսալ նրա հայացքը:
- Ո՛չ, ամենևի՛ն, - բղավեց նա սրտնեղած:

Ավելի ուշ նա ինձ պատմեց մի չերքեզի մասին, ով մի խումբ համախոհներով փորձել էր սուլթան Համիդին սպանել դավաճանության արդյունքում սպանված Միդհաթ փաշայի վրեժը լուծելու համար: Միդհաթ փաշան նպատակ էր ունեցել կարգ ու կանոն հաստատել երկրում, օրենքի ուժով զսպել սուլթանների բռնապետությունը: Չերքեզին չէր հաջողվել իր պլանը իրագործել, քանի որ վերջին պահին իր համախոհները մատնել էին իրեն: Ավելի ուշ չերքեզը ձերբակալվել և գլխատվել էր: Հանկարծ Տիգրան մորեղբայրը բացականչեց.

- Դու՛ դեռ շատ փոքր ես: Դու՛ չպետք է այսպիսի բաներ լսես: Ի՞նչ էի ես մտածում, երբ այսպիսի բաներ էի երեխային պատմում, - ասաց նա ինքն իրեն՝ բարձրացնելով հոնքերը:

Բայց Տիգրան մորեղբայրը մի սերմ էր տնկել մտքիս մեջ: Այդ օրվանից սկսած մեծ տհաճությամբ էի լսում, երբ սուլթանի ծննդյան կամ գահակալության տարեդարձին գովաբանական խոսքեր կամ նրա «արևշատության» համար մաղթանքներ էին հնչում: Բարեբախտաբար մեր տանը ոչ ոք հարկադրված չէր իր «հավատարիմ հպատակի» զգացումունքները արտահայտել: Մեր տունը չեզոք էր այս հարցերի նկատմամբ և անբարեհաճ էր այն ընտանիքների հանդեպ, որոնք իրենց տների ճակատամասում լապտերներ էին տեղադրում այդ առիթով իրականացվող քաղաքի լուսավառությանը մասնակցելու նպատակով:

Ընթրատ և գլխատված չերքեզի դեպքը մեծ ատելություն էր առաջացրել դեպի բռնակալ սուլթանները: Այն նաև առիթ էր դարձել, որ մտքումս նմանատիպ պատմություններ հորինեմ, որոնք աստիճանաբար այլափոխվում էին երևակայությանս մեջ: Ամեն երեկո, երբ գլուխս դնում էի բարձին, աչքերս փակում էի, երկար ժամանակ արթուն էի մնում և ինքս ինձ պատմություններ էի պատմում: Ես տեսնում էի չերքեզին՝ բաձրահասակ, վայելուչ, կապույտ աչքերով, ով իր խարդախ համախոհների հետ բարձրանում էր պալատի սանդուղկներով: Նա ականջ էր դնում ձայներին ու շշուկներին՝ ոչ թե վախից, այլ զգուշությունից ելնելով, որպեսզի իր գործը հաջող իրագործի: Նա հանդուգն էր, քաջ և մեռնելուց չէր վախենում: Նա հորս և Արթին ամուջայի համադրությունն էր: Քանի՛ քանի՛ անգամներ հայրս ասում էր, որ մահից չի վախենում: Թերևս միայն մեկ անգամ էի լսել այդ խոսքերը, բայց պատկերացնում էի, որ դրանք շատ են եղել և բազմաթիվ էին դարձել ինձ համար: Ես էլ մահից չէի վախենում: Ցանկանալով ամրապնդել այդ գաղափարը իմ մտքում՝ ընկղմվում էի ցավալի բերկրանքի մեջ:

Հետզհետե, իմ հնարած պատմություններում չերթեզը դարձա ես: Իմ համախոհները այն տղաներն էին, որոնց խաղընկերները չէին վստահում, որոնք մատնիչ էին կամ կարող էին մատնիչ լինել: Նրանց հետ պալատի սանդուղկներով բարձրանում էի: Մշտապես սանդուղկներ կային այդ պատմություններում:

Ժամանակի ընթացքում անձնագոհության այդ կրակը այլ սնունդ գտավ և ընթացավ այլ ուղղություններով:

Հայրս լյարդի հիվանդություն ուներ, որը երբեմն սաստիկ սպասզմային ցավեր էր պատճառում իրեն: Ցավերը հանկարծակի էին սկսվում, այդ ժամանակ հայրս տուն էր վերադառնում ու պառկում: Բժշկի կարծիքով ցավերը անտանելի էին, սակայն հայրս ջանում էր կամփի ուժով հաղթահարել դրանք: Երբեմն, հակառակ իր կամքին, բառաչյունի նմանվող խուլ աղաղակ էր հասնում ներքևի հարկերը, որտեղ մեզ՝ երկու երեխաներիս, էին պահում, որպեսզի չաղմկենք տանը: Ինչպես մորաքույրներս էին զարմանքով պատմում, ինձ վրա խորը ազդեցություն էր թողնում այն, թե ինչպես էր հայրս դիմադրում ցավին, թե ինչպես էր իմ սիրելի հայրիկը երկու ցավի մեջ ժպտում և կատակում մորս հետ, որպեսզի նրան սիրտ տա: Եվ երբ հայրս երկու երեք օր հետո վեր էր կենում անկողնուց, դեռևս գունատ, բայց ամուր իր ոտքերի վրա կանգնած, ինձ թվում էր, որ նա հաղթել է աներևույթ մի հրեշի և նա հերոս է: Ես էլ էի երագում նրան նմանվել և հաղթել բոլոր հրեշներին, ինչպես նաև հրեշներին հաղթելու հնարավորություն ունենալ: Ինձ ամեն ինչ հրեշի տեսքով էր ներկայանում: Հիվանդությունները հրեշներ էին, չքավորությունը զարմանալի մի հրեշ էր, բռնապետերը անտեսանելի հրեշներ էին, առասպելական արարածներ, որոնց կոտորելը պետք էր բռնել և սանձահարել:

Երանի՛ տղա լինելի, լինելի չերթեզ, գող, ավազակ, ապաստանելի լեռներում: Ես կպայքարեի հանուն արդարության և ուրախությամբ կմեռնեի:

Վարի թաղերը

Մեր հաճախած տներից գլխավորապես հիշում եմ ձկնավաճառ Նիգոթի և Գարիենե խանումի տները: Նիգոթը արդեն ծեր էր, բայց երբեմն գնում էր ձուկ որսալու և վաճառում էր փողոցներում կամ Յենիմահալլեի շուկայում: Բայց ավելի հաճախ ձուկ էր գնում այլ ձկնորսներից և փոքրիկ հավելավճարով վաճառում էր իր հաճախորդներին: Նա ալեխառն մազերով մի մարդ էր, որը ժամանակին նավավար էր եղել: Մազերը աճել էին գրեթե մինչև հոնքերը և ծոծրակի վրա կորում էին շապիկի օձիքի մեջ: Դեպի դուրս ցցված խիտ և թավ հոնքերի տակից նրա գորշ աչքերը ներքևից վերև այնպես էին նայում, որ կարծես հայացքը ավելի հեռուն էր գնում, քան իր նպատակակետն էր: Նա տարօրինակ կերպ էր խոսում, ինչը սկզբում լավ չէի հասկանում, բայց ավելի ուշ հասկացա, նրա խոսքերը հնչում էին ինչպես թիակների հարվածներ նավակի կողքերին կամ ճողփյուններ ջրի մեջ: Նա անգիտակցաբար ոգեշնչվում էր ծովի ռիթմից, և երբ որևէ դեպք էր հիշում իր երիտասարդ տարիներից, հիմնականում՝ վտանգավոր նավարկությունների մասին պատմություններ, իր խոսքը դառնում էր պատկերավոր և գրեթե շոշափելի:

Տիկնիկներին խաղացնելը նրա մոլուցքն էր կյանքում: Նրա տարեց կնոջ խոսքով, տիկնիկներն էին իրենց ընտանիքը աղքատության եզրին հասցրել: Նրանց զավակները մահացել էին մանուկ հասակում՝ մեկը մյուսի ետևից: Նիգոթի պապենական տունը, որը 4 սենյակից էր բաղկացած, այրվել էր Վանքի բաղի հրդեհի ժամանակ: Այս բոլոր դժբախտությունները Նիգոթին չէին ստիպել թողնել իր կյանքի մոլուցքը: Տան այրվելուց հետո նա իր ձեռքերով մի փայտաշեն խրճիթ էր կառուցել, առաջնահերթորեն մի սավան էր կախել սենյակի մեջ և սկսել էր տիկնիկներին խաղացնել դրա ետևում: Նիգոթը ավելի շատ ցավում էր իր կողմից պատրաստված փայտյա տիկնիկների, քան տնային իրերի կորստի համար, բայց չէր հուսահատվում: Այլ գործերը մի կողմ թողնելով՝ նա նստում էր իր խրճիթի շեմին և հաստ մատներով

ու սուր կեռի միջոցով պատրաստում էր իր դերասաններին, որոնց գլուխները և վերջույթները մեծ ճկունությամբ էին շարժվում:

Ձմռանը՝ երկարաշունչ գիշերներին, նա հրավիրում էր տեղացի ձկնավաճառներին և սավանի ետևում ցուցադրում էր իր հնարած խաղերը: Մի անգամ նրան հաջողվել էր հրավիրել Սամաթիայի հայտնի տիկնիկավար Աթովթոսին՝ իր տիկնիկային խաղը ներկայացնելու: Աթովթոսի տիկնիկային խաղից հետո, որը տիպային կարագյոզի ներկայացում էր՝ նրա բացառիկ մեկնաբանությամբ, Նիգոթը ցուցադրում էր իր տիկնիկների խաղերը: Երբ Նիգոթի տարեց կինը հասել էր իր պատմության այս կետին, Նիգոթը իր թավ հոնքերի տակից հայացքը հառեց դեպի Երանիկ մորաքույրը և ասաց.

- Աթովթոսը ճակատս համբուրեց:

Նկատել էի, որ Երանիկ մորաքույրը, առերես համաձայն լինելով տարեց կնոջ զանգատներին, մեծ հետաքրքրությամբ էր լսում Նիգոթի նկարագրությունները իր նոր հնարած խաղերի մասին: Նա երբեմն հարցեր էր տալիս և որոշ մանրամասներ էր ճշտում, երբեմն էլ նկատառումներ էր կատարում, որոնք բարձր էին գնահատվում Նիգոթի կողմից:

- Երանիկ խանում ինչու՞ մի երեկո չես գալիս տիկնիկային խաղը նայելու: Փոքրիկ աղջկան էլ հետո բե՛ր,-ասում էր Նիգոթը:

Բայց դա գրեթե անհնար էր: Մորաքույրս չէր կարող տանից նույնիսկ միայնակ դուրս գալ, ուր մնաց՝ ինձ հետ: Բայց ձմեռային մի երեկո մայրամուտից հետո, մենք Նիգոթի տիկնիկների խաղը դիտեցինք հապճեպորեն: Սենյակի մի կողմում՝ չորս անկյուններից ամրացված սավանի ետևում, տիկնիկներով ներկայացում էր ցուցադրում: Յուրաքանչյուր դերակատարի խոսքերը նա արտաբերում էր տարբեր ձայնով, նույնիսկ մի կին կար նրա դերակատարների մեջ: Այնուհետև ներկայացման

ընթացքում էշը աղաղակեց, աքաղաղները կանչեցին, և շուկայի մեջ կռիվ առաջացավ: Ինձ թվում էր, որ մարդկանց բազմություն կար սավանի ետևում, և դեռ երկար ժամանակ չէի կարողանում հավատալ, որ ձկնավաճառ Նիգոթն միայնակ էր բազմամարդ խաղը ներկայացնում:

Նիգոթը պարզ թեմա էր ընտրում, որը ներկայացման մեջ զարգացնում էր, ճյուղավորում և վերջապես տրամաբանական ավարտի էր հասցնում: Երանիկ մորաքույրը ստիպված էր լինում իմ անհամար հարցերին պատասխանել: Տիկնիկային ներկայացումից վերադառնալուց հետո նա ասաց, որ Նիգոթի խոսքերը ինպրովիզացիա են, նա նախապես ոչինչ չի պատրաստում:

Այդ տիկնիկային ներկայացումը մեծ ազդեցություն գործեց ինձ վրա: Ես էլ իմ հերթին սկսեցի հնոտիներից շատ տիկնիկներ պատրաստել, որոնցից ամեն մեկին մի անուն էի տալիս: Բայց ես իմ պատմությունները նախապես էի պատրաստում և մտքումս բոլոր հավանական երկխոսությունները իրենց վերջնական տեսքին էի հասցնում: Իմ պատմությունները վերցված էին իրական կյանքից, միայն վերջաբաններն էի կազմում ըստ իմ հայեցողության:

Գարիենե խանումի տունը բոլորին այլ պատմություն էր: Նա այրի էր դարձել երիտասարդ տարիքում, մեծացրել էր իր երկու որդիներին՝ յազմա գործելով, որոնցից մեկը իմ հասակակիցն էր: Նա հոգ էր տանում նաև իր հոր և պապիկի մասին, վերջինիս մասին ասում էին, որ մոտ հարյուր տարեկան է: Նրա հայրը ևս յազմա էր գործում էր:

- Դրանք հին լավ օրեր էին, Երանիկ խանում: Ի՞նչ իմանայի, որ այսպես պետք է լինի, նստեցի տանը ինչպես մի աղախին, - փնթփնթում էր նա:

Նա մի ժամանակ գլխավորել էր յազմաջիններին, իշխանություն և հեղինակություն էր ունեցել, բայց հողացավերի պատճառով թողել էր գործը և տանն էր նստել:

Գարիենե խանումը, չնայած իր ծանր բեռին և տևական աղքատությանը, ուրախ և զվարթ կին էր: Երբեմն լիաթոք ծիծաղում էր Երանիկ մորաքրոջ ասած ինչ-որ խոսքի վրա, հանկարծ սթափվում էր, լրջանում և, խորը հառաչելով, ասում էր.

- Այս ի՞նչի վրա եմ անկապ ծիծաղում: Մի մեղադրե՛ք ինձ Երանիկ խանում: Իմ սիրտը լի է խինդով: Սատանան տանի, մենք, ճիշտ է, աղքատ ենք, բայց սիրտս մեծ է:

Երբ մորաքրոջս ձեռքից բռնած իջնում էինք մեր փողոցով, իմ մեջ մեծ ցանկություն էր առաջանում գնալ Գարիենե խանումի տուն: Նրա տան ճանապարհին անցնում էինք Յենիմահալլեի աղքատիկ փողոցներով, բարձրանում Բաղլարբաշի պողոտայով, թեքվում էինք դեպի վանքի բաղը, և թակում էինք նրա մեկ հարկանի փայտե տան դուռը:

Երբեմն տանը դեռ չմոտեցած՝ տնեցիները նկատում էին և ուրախությամբ շտապում էին մեր կողմը, մորաքրոջս տեղավորում էին բազմոցի անկյունում: Ինձ շատ էր դուր գալիս, երբ նա անմիջապես սկսում էր մեծ ոգևորությամբ խոսել, որ ես երբևցե չէի տեսել ո՛չ տանը, ո՛չ էլ այն ծանոթների ներկայությամբ, որոնք մեզ հաճախ էին այցելում: Լինեք այդ տունը Յենիմահալլեում, Չինիլի Ջամիլի, Վանքի Բաղի, Դադ Համանիլի հեռավոր թաղամասերում, միշտ չքավոր մարդու տուն էր, որտեղ շատ կանայք ու երեխաներ էին լինում, միանում էին նաև հարևանները՝ վայելելու Երանիկ մորաքրոջ ներկայությունը:

Այդ տներում էր, որ մոտիկից ծանոթացա չքավորության հետ, այդ տներում էի լսում ինքնաբուխ ընթոստության խոսքեր, յազմայի գործատերերի բնորոշումներ, որոնք չարաչար շահագործում էին բարվորներին, հատկապես բանվորուհիներին: Ես լսում էի պատմություններ, թե ինչպես են նրանք ոսկին պակաս կշռում, հաշիվների հետ խարդախություններ կատարում, գին իջեցնում և անտեսում այս մարդկանց իրենց դժվարին ժամանակներում: Ես նաև տեսնում էի, թե ինչպես են այդ աղքատ

մարդիկ օգնում միմյանց, հատկապես հիվանդության և կարիքի դեպքում՝ անձնվիրություն և ապշեցուցիչ անձնագոհություն էին ցուցաբերում: Ես տեսնում էի, թե ինչպես է տխրությունը և խինդը միևնույն ժամանակ երևում այդ խոնարհ մարդկանց դեմքերին, թե ինչպես էին իրենք համով հոտով խոսում և հումորով պատմում իրենց գլխին եկածը:

Երանիկ մորաքույրը այլ անհատականություն էր այդ տներում: Նա զվարճացնում և ամոքում էր այդ մարդկանց իր սրամիտ պատմություններով, տեղին ակնարկներով, իր սուր և ճիշտ դատողություններով: Երբեմն մեզ խնդրում էին մնալ և միասին ճաշել: Սա հաճախ պատահում էր Գարիենե խանումի տանը:

Երբ Երանիկ մորաքույրը ցանկանում էր գնալ, հանկարծ տնեցիներից մեկը ասում էր.

- Սիրելի Երանիկ խանում, մնացե՛ք, եկե՛ք միասին մի պատառ բան ուտենք, դրանից հետո կգնա՛ք:

Երանիկ մորաքույրը մերժում էր՝ ինձ որպես պատրվակ ներկայացնելով:

- Նրա հայրը չի ցանկանում, որ ուշ քնի, - ասում էր նա:

Մորաքույրս այլ առարկություններ էլ էր ներկայացնում, բայց ամեն ոք՝ Գարիենե խանումը, տան ծերերը և երեխաները, պնդում էին, նունիսկ հարևաններն էին միջամտում: Ես սրտատրոփ սպասում էին բանակցությունների ելքին, և, երբ որոշվում էր, որ ճաշին պետք է մնանք, այդ ժամանակ ուրախությունս անսահման էր լինում:

Ճաշը շտապ պատրաստում էին սենյակի մեջ դրված թիթեղյա վառարանի վրա, եթե արդեն պատրաստված կերակուր չկար: Ես, որ շատ դժվարահաճ էի ուտելիքի նկատմամբ, ախորժակս սրած սպասում էի, որ սեղանը զցեն: Երբեք որևէ տեղ այդքան

հաճույքով չէի ուտում, որքան այդ տներում: Երբեմն այնպես անհագ ախորժակով էի ուտում, որ մորաքույրս զարմանում էր և անհանգստանում, որովհետև ինձ համարում էին քիչ ուտող երեխա:

Վերջապես հասնում էր ճաշի ժամը, կարկատած սեղանի սփռոցով ծածկում էին ցածր աշխատասեղանը, որի շուրջը մենք նստում էինք ծալապալտիկ՝ տափակ բազմոցների վրա: Սեղանի մեջտեղում մեծ ափսեով մեկ ճաշատեսակ էր դրվում՝ խաշած լոբի, փլաֆ, կամ խավիճ: Ամեն մեկի առջև դնում էին փոքր ափսեներ, պատառաքաղներ, նստածներից ամեն մեկը իր պատառաքաղով մեջտեղի ափսեից էր վերցնում և ուտում: Սեղանի վրա լինում էր նաև թթու և ձիթապտուղ: Պանիրը այդ տների համար թանկ ապրանք էր, բայց ես արդեն նախապատվությունը տալիս էի ձիթապտղին և հաճույքով ուտում էի՝ ուշադիր լսելով մեծերի խոսակցությունը:

- Վա՛տ ժամանակներ են, նախկինում ամեն ինչ ուրիշ էր,- ասում էին նրանք:

Անցյալի կարոտը մշտապես առկա էր: Եթե ես հավատայի այն ամենին ինչ ասվում էր, ապա պետք է մտածեի, որ նախկինում ամեն ինչ առատ էր և առասպելական էծանություն էր տիրում:

- Մեկ օխա բրինձ կարելի էր գնել երկու ահչեով, - պատմում էր Գարիանե խանումի տարեց հայրը,- երկու վտիտ ձեռքերը վառարանի մոտ տաքացնելով:

Նրա էլ ավելի տարեց պապիկը հաճախ ընդհատում էր և ասում խռպոտ ձայնով.

- Դուք ոչի՛նչ չեք տեսել: Ես, ոսկե մահմուդիյե մետաղադրամները մեջքիս գոտիի մեջ կապած, մեկ ահչեով կարող էի 5 օխա բրինձ գնել: Պետությունը հացը և ծխախոտը անվճար էր տալիս, և երկու դուրուշով կարող էիր մեկ սայլ ձմերուկ և սեխ գնել: Մինչ ձմռան գալը երկու երեք մահմուդիյե մետաղադրամ փոխանակում էի, ամբարներս լցնում էի, դռներն ու պատուհանները փակում էի, ընտանքիս հետ հանգիստ վայելում էինք այդ ամբողջը: Բայց այժմ բոլորս՝ մեծ ու փոքր, գնչու ենք

դարձել: Այն օրը, երբ մեր թաղի խանութում էի, Թորոս Էֆենդիի մարդիկ եկան և մի ամբողջ տակառ ձիթապտղի յուղ ուզեցին: Ի՛նչ աշխարհ դարձավ: Ժամանակին մեռած լինեի՛, որ չտեսնեի՛ այդ ահավոր ժամանակները:

- Ո՞վ էր Թորոս Էֆենդին, - հարցրեց մորաքույրս, դեմքը խոժոռելով: Սափրիչ Նիկողոսի տղան չէ արդյո՞ք: Նրանք հիմա կառավարության համար են աշխատում, այնպես չէ՞: Ինձ խոսեցնել պետք չէ՛, թե նրանք ինչ ճանապարհով են առաջ գնացել: Սափրիչ Նիկողոսը Պիշմիշ ամիրայի անձնական օգնականն էր բաղնիքում: Նրա կինն էլ, ամա՛ն, պետք է դադարել այս մասին խոսել,- ավելացնում էր մորաքույրս: Այստեղ շատ բան կա ասելու, բայց ամեն պատի վրա էլ ճանձ կա:

- Նրանք որևէ բան բաց չեն թողնում, - կրկնում էր Գարիենե խանումը, նկատի ունենալով երեխաներին, որոնք իրար կողքի նստած էին գետնին՝ մեծ ուշադրությամբ լսելով ամենը, ինչ մեծերը խոսում էին:

Մորաքույրս սկսեց պատմել ծանոթ պատմություններից մեկը քողարկված խոսքերով, որով բացահայտում էր թներ առած և հետզհետե հեղինակություն ձեռք բերած մի չտես ընտանիքի գաղտնիքները: Մորաքույրս նաև պատմում էր ուրիշ հարուստների մասին, որոնք գողանում էին մուրհակներ, միտումնավոր հրաձգություններ էին կազմակերպում, որպեսզի փաստաթղթերը այրվեն, կեղծ սնանկությունների, մատնությունների և ամեն տեսակի խարդախությունների գործերում մասնակից էին:

- Այդ ցեղատեսակը,- նա այդպես էր անվանում նոր հարստացած առևտրականներին,
- մի տեսակ է, որը ամեն քայլի կղիմի մեկ օր զվարճանալու համար առանց մտահոգվելու այն ընտանիքների մասին, որոնց չքավորության էին հասցնում: Նրանք կվաճառեն իրենց հորը, մորը փողի համար:

- Իրենց էլ չի մնա՝, - ասում էր Գարիենե խանումի հայրը՝ ինքնիրեն մխիթարելով:

- Մնա կամ չմնա, - ասում էր Երանիկ մորաքույրը սրտնեղած- մենք պետք է մեր մասին հոգ տանենք:

Ճաշից անմիջապես հետո Գարիենե խանումը ջազվեն դնում էր վառարանի տաք մոխրի վրա և սուրճ էր պատրաստում: Այդ ժամանակ տան տարեցները սկսում էին պատվել Շիրինի և Ֆերհաթի մասին:

- Նրանք ուրիշ մարդիկ էին, - ասում էին նրանք՝ իրար հերթ չտալով, - ճիշտ է, նրանք կարող էին շատ խմել, բայց ուժեղ բնավորություն ունեին: Նրանք պաշտպանում էին իրենց իրավունքերը, երբեք ուրիշի իրավունքները չէին խախտում, ընդհակառակը՝ պաշտպանում էին:

Ծերունիները ճանաչում էին Շիրինին և Ֆերհաթին:

- Երանիկ խանում, մի հարյուր տարեկան դարձան, շատ ապրեցին: Ես հիշում եմ, որ նրանք կողք կողքի էին նստում Աջիբաղեմի *արաբաջիների խանի* առջև: Ճերմակ մորուքներով, կաղնու ծառերի պես ուղիղ հասակով ամուր մարդիկ էին նրանք, կարծես հին գերաններ լինեին: Թուրքերը հարգում էին նրանց և սպիտակ մորուքավոր էին ասում: Նրանք Շիրինին և Ֆերհաթին շատ խելացի մարդիկ էին համարում: Երբ մի խնդիր կամ կռիվ էր լինում թաղում, գնում էին Շիրինի և Ֆերհաթի մոտ հարցին լուծում գտնելու նպատակով: Նրանք լսում էին երկու կողմերին էլ և կայացնում էին իրենց որոշումը: Ֆերհաթը մի ձեռնափայտ ուներ, որով անձամբ ծեծում էր մեղավորին: Ես անձամբ եմ տեսել, թե ինչպես էր մեկին կանչել պատժելու համար, նա էլ եկել էր: Ո՛չ, նրանք փող չունեի՛ն, բայց ունեին մեծ սիրտ: Նրանք արդարմիտ էին և շատ էին օգնում խանութպաններին: Որտե՞ղ են հիմա այսպիսի մարդիկ:

Երանիկ մորաքույրը հառաչում էր, ներկաները արձագանքում էին նրան:

- Ումեդիքը նկարել էր նրանց, - ասում էր Գարիենտե խանումի պապիկը: Բայց երբ տունը այրվեց, նկարները այրվեցին տան հետ միասին:

Ոմանք ասում էին, որ նույն նկարիչը՝ Ումեդիքը, Շիրինի և Ֆերհաթի նմանությամբ էր նկարել Պետրոս և Պողոս առաքյալների նկարները, որոնք օծված և կախված էին Սուրբ Խաչ եկեղեցու խորանի երկու կողմերում:

Ժամանակին Սկյուտարից մի ամիրա, լսելով, որ սուրբ առաքյալների պատկերները պատրաստվել էին Շիրինի և Ֆերհաթի օրինակով, գայթակղվել էր և ցանկացել էր այդ նկարները վերցնել:

Լուրը հասնում է նաև Շիրինին և Ֆերհաթին, և այդ ժամանակ թաղի բոլոր ջահակիրները ոտքի են կանգնում՝ պաշտպանելու ծերունիներին: Նկարները մնում են իրենց տեղում, իսկ ամիրան ամիսներ շարունակ զգուշությամբ էր անցնում Աջիբադեմի միջով:

Անդրադառնալով այդ հին պատմությանը՝ Երանիկ մորաքույրը ասում էր.

- Պապիկս և նրա եղբայրը սովորական սայլապաններ էին, այնինչ Պետրոսը և Պողոսը՝ ձկնորսներ էին, ոչ ամիրաներ:

Դպրոցը

1988 թ.-ին Սկյուտարի Սուրբ Խաչ դպրոցը վերակազմավորման մեջ էր: Դպրոցը հրաշալի պատմություն ուներ: Զարել Խանջյանը (ճանաչված պոետ, ով հետագայում հայտնի դարձավ Սիրիլ անունով) ավարտել էր այս դպրոցը, Վահրամ Թորգոմյանը և իր եղբայրը ևս ավարտել էին այս դպրոցը, որոնք երկուսն էլ հետագայում համալսարանական կրթություն էին ստացել: Բոլորն այն կարծիքին էին,

որ դպրոցը բավարարում էր անհրաժեշտ նախապայմաններին, կարող էր դառնալ ավագ դպրոց և նոր սերդնին հաջողությամբ պատրաստել ժամանակակից կյանքի մարտահրավերներին համապատասխան:

Հետզհետե հասարակության այն խավը, որը ստանձնել էր թաղային գործերի ղեկավարությունը գիտակցում էր իր դերի կարևորությունը: Նոր հարստացող առևտրականները իրենց հետևից տանում էին միջին կարողության գործատերերին և շուկայի խանութպաններին, որոնք առևտրականների հետ նյութական շահերով էին կապված: Նրանց հաջողվել էր հեռացնել նախկին պահպանողական և կրոնական ուղղվածություն ունեցող թաղային խորհրդին՝ «հաջի աղաներին»: Նոր հոգաբարձուները ընտրված էին երիտասարդ, կրթված և լուսավոր մարդկանցից: Այս նոր հոգաբարձուներից շատ լավ հիշում եմ Ֆերիսթյան և Ավկեր Էֆենդիներին, երկուսն էլ եվրոպայում էին կրթություն ստացել, և մեծ եռանդով էին հետևում և հսկում դպրոցի՝ ծրագրված վերակազմավորմանը:

Գլխավոր և ցավոտ խնդիրը մանկապարտեզն էր, ուր հաճախում էին չորսից յոթ տարեկան չքավոր երեխաները: Մանկապարտեզները տղաների և աղջիկների համար առաձին էին, աղջիկների դպրոցը ուներ իր մանկապարտեզը, տղաներինը՝ իրենը: Մանկապարտեզները կառավարվում էին մի տարեց վարժուհու և մի ծերունի պատվելիի կողմից համապատասխանաբար, որոնց ամբողջ դերը կայանում էր նրանում, որ հետևեն մանուկներին լուր և անշարժ մնալ: Այդ նպատակին հասնելու համար նրանք չէին վարանում ծեծել և ահաբեկել երեխաներին:

Աղջիկների մանկապարտեզը զբաղեցնում էր դպրոցի առաջին հարկի մեծ սրահը: Սենյակը լցվում էր գարշահոտությամբ, որը տարածվում էր վատ խնամված և թերսնված երեխաներից: Շատ երեխաներ քնում էին իրենց գրասեղանների վրա: Այդ սենյակում երեխաներին կարդալ և գրել էին սովորեցնում Կարապետ աղայի

մեթոդներով՝ ավանդական այբբենարանով: Այբբենարանի առաջին էջի վրա մի սև խաչ կար, որի նեքևում գրված էր՝ «Խաչ, օգնիր ինձ»:

Շնորհիվ այն բանի, որ ես գրեթե ինքնուրույն էի սովորել կարդալ, այդ զգվելի այբբենարանը ինձ չէր տանջել, բայց այն մեր ժամանակի երեխաների մղձավանջն էր: Որքան աղիողորմ արցունք էր թափված այդ այբբենարանի էջերի վրա, որքան մանկական շրթունքներ, հեկեկալով, արտաբերել էին նրա վանկերը՝ բե այբ՝ բա, բե էջ՝ բե: Իմ ընկերուհիներից մեկը պատմում էր, որ երբ սովորում էր այդ գարշահոտ մանկապարտեզում, մեսրոպյան տառերը իրեն սարափելի գազանիկներ էին երևում արցունքների ամպի ետևում, և նրա խորշանքը այնքան մեծ էր, որ նունիսկ գիշերն էր դրանք երագում տեսնում:

Հաջորդ էջերին, վանկերը երկու սյունակների միջև էին բաժանվում և կազմում էին անիմաստ բառեր, բայց հաջորդաբար բառերը բազմավանկ էին դառնում, իսկ վերջին էջում բառերը մանր տառերով էին և վեցավանկ՝ խաղաղասիրական, փղղապցիական:

Ծեր, նեղսիրտ վարժուհին քանոնով հարվածում էր աշակերտուհիների՝ կապված և ցրտից ճաքճքած մատներին: Երգի և ուրախ աղմուկի փոխարեն մանկապարտեզից աղեկտուր լացի և անօգնական երեխաների՝ հևոտ հեծկլտանքներն էին լսվում:

Այդ երեխաները Սկյուտարի չքավոր ընտանիքներից էին և գրեթե անվճար էին սովորում: Ոջլո՛տ, հիվանդո՛տ, կե՛ս կուշտ, կե՛ս քաղցած, անճար սովորող երեխաները թշվառության մեջ էին հատկապես խոնավ աշնանային և ցուտ ձմեռային օրերին: Ես մինչ այժմ հիշում եմ երեխաներին, որոնք ստիպված էին հանել իրենց ցեխոտ կոշիկները և բարձրանալ դասասրահ ծակծկված գուլպաներով:

Նոր հոգաբարձուների խորհուրդը կարողացավ վերջ դնել այս իրավիճակին: Նրանք մի երիտասարդ վարժուհու նշանակեցին կառավարչի պաշտոնում, աշխատանքի ընդունեցին նրա օգնականին, որոնք էլ հետագյում միացրեցին սղաների և աղջիկների մանկապատարտեզները:

Մանկապարտեզի նոր վարժուհին Աշճյան ազգանունով, սիրուն, երիտասարդ աղջիկ էր, ով մեծ ուշադրություն էր դարձնում իր արդուզարդին, միշտ կրում էր սպիտակ, ասեղնագործ օձիք և թևնոցներ: Նա գրել և հրատարակել էր, «Դեղին վարդեր» վերնագրով մի բանաստեղծություն, որը նրանք փառքի լուսապսակ էր տալիս: Ես սիրում էին նրան, չնայած որ մենք միմյանց չգիտեինք, ես սովորաբար պտտվում էի նրա շուրջը դասամիջոցի ժամանակ: Նա մի անգամ ժպտաց ինձ և այդ օրվանից ես երախտապարտ էի նրան այդ ժպիտի համար: Նա մեղմ, քաղցր բնավորություն ուներ: Նա հաճախ մատիտը հանում էր, ինչ-որ բան էր գրում տետրում, և հետո երագող հայացքը հառում էր անորոշ մի կետի: Անշուշտ բանաստեղծություններ էր գրում, բայց չեմ կարծում, որ «Դեղին վարդերից» հետո ինչ-որ բան հրատարակած լիներ:

Մինչև տասնչորս տարեկան աղջիկները, որոնք տարբեր սոցալական խավերի էին պատկանում, հաճախում էին մեծերի խումբ: Կային առևտրականների ընտանիքներից մի քանի աղջիկներ, որոնք հոգաբարձուներից որևէ մեկի կամ թաղային խորհրդի որևէ անդամի ազգականներն էին: Կային նաև երկու-երեք տասնյակ աղջիկներ, որոնք անվճար էին սովորում, նրանք ակնհայտորեն չքավոր ընտանիքներից էին: Աշակերտուհիների սովոր մեծամասնությունը արհեստավորների, փոքրիկ խանութպանների, *Էսնաֆների* զավակներ էին, և ինչպես ասում էին, նրանք համեմատաբար բարեկեցիկ ընտանիքներից էին: Առևտրականների աղջիկները գոռոզ էին և արհամարհանքով էին վերաբերվում վարժուհուն և ուսուցչուհիներին, որոնք կարծես իրենց ծնողների և ազգականների վարձկանները լինեին: Վարժուհին և ուսուցչուհիներից ոմանք քծնում էին այդ աղջիկներին, բարձր գնահատականներ էին նշանակում, ներողամիտ էին ու ժպտում

էին, երբ նրանք զանցանքներ էին գործում: Այս ամենը մեր ուշադրությունից չէր վրիպում:

Իրականում, *Հսնաֆների* աղջիկներն էին ամենատաղանդավոր աշակերտուհիները: Նրանք խառնվածք ու բնավորություն ունեին, բողոքում էին անարդարությունների դեմ, պաշտպանում էին թույլերին, և երբեմն, իրենց անձը վտանգելով, կազմակերպում էին ըմբոստ շարժումներ:

Տասներկու տարեկան հասակում ես արդեն ճանաչում էի արտաքին աշխարհը դպրոցի աշխարհի միջոցով՝ իր հակասություններով, իր պայքարներով, իր անհաշտելի շերտավորումներով: Դպրոցը մեծերի աշխարհի մանրանկարն էր, որը ես հետագայում կճանաչեի, որն ամբողջական էր դառնում կեղտոտ գործերով, սնափառությամբ, կեղծիքով, ստախոսությամբ, եսասիրությամբ: Այնտեղ կային աղջիկներ, ովքեր լավ գնահատական ստանալու համար ամեն ստորության դիմում էին, և որոնք հետագայում նյութական միջոցներ կուտակելու համար նույն կարգի միջոցներ էին գործի դնելու: Այնտեղ կային նաև անձնական շահի և փառքի հանդեպ անտարբեր աղջիկներ, որոնք անտրտունջ պատժվում էին, բայց չէին մատնում իրենց ընկերուհիներին: Կային աղջիկներ, ովքեր սրտաբուխ էին, մի ակնթարթ կարող էին լինել վեհանձն, անձնագոհ, բայց հետևողական չէին իրենց վարքագծում: Կային աղջիկներ, ովքեր հլու-հնազանդ ենթարկվում էին դպրոցական իշխանության հրահանգներին, և իրենց վարքագիծը կետ առ կետ հարմարեցնում էին դպրոցական իշխանության ցանկություններին, բայց կային նաև այնպիսիները, ովքեր ամեն գնով պահպանում էին իրենց մտքի անկախությունը:

Դպրոցի պաշտոնյաների կողմից կիրառվող հարուստների և աղքատների միջև խտրականությունը չէր վրիպում մեր ուշադրությունից, և արդարության ու իրավունքների հավասարության զգացողությունները կարծրացել էին մեզանից ոմանց մեջ:

Այդ շրջանի կյանքը մտաբերելով՝ վերստին վերապրում եմ անհավասար պայքարի մեջ եղող ինչ-որ մեկի բարոյական բախումները: Միշտ արթուն և պատրաստ ինքն ինձ պաշտպանելու, միշտ լարված դրության մեջ՝ երբեմն անդիմադրելի ցանկություն էր առաջանում անցնելու հարձակման՝ առանց նկատի ունենալու հետևանքները:

Մի օր այսպիսի տրամադրության մեջ էի, երբ հարձակվեցի վարժուհու վրա, որ քանոնով հարվածում էր աղքատ մի աղջկա՝ ցրտից վնասված մատներին: Հետևանքերը շատ ծանր կարող էին լինել, բայց հայրս, որի հետ խոսել էին իմ անորակելի արարքի մասին, հարցրել էր տնօրենին.

- Բայց գոնե հարցրեցի՞ք, թե աղջիկս ինչու էր հարձակվել վարժուհու վրա: Օրենքով մարմնական պատիժը վերածված էր, և դպրոցը նախամեծար համարեց սահել այս խնդրի վրայով: